

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ, ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ՏԻՐԱԽՆԱՄ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ողորմութեամբ Աստուծոյ ամենակալին մեր սուրբ եկեղեցին, թէ՛ ի Հայաստան և թէ՛ ի սփիւռս աշխարհի, իր հովանու ներքև պահում, պահպանում և հոգևոր սնունդ է բաշխում մեր հաւատացեալ ժողովրդին և առաջնորդում նրան աւետարանական սիրոյ և խաղաղութեան ճանապարհով:

Այսօր Մենք ուրախ ենք ձեզ աւետելու, թէ ձեր թեմի բարեջան առաջնորդ գերաշնորհ տ. Յուսիկ եպիսկոպոս նոր և պատասխանատու պաշտօնի կոչուած լինելով Մայր Աթոռում, իբրև նրան յաջորդը նշանակել ենք գերաշնորհ տ. Վահան եպիսկոպոս Տէրեանին, որ երկար տարիներ ժրաջանութեամբ ղեկավարելուց յետոյ Արարատեան թեմը, այժմ գալիս է ձեր թեմում շարունակելու իր ծառայութեան առաքելութիւնը, այն է՝ է՛լ աւելի պայծառացնելու թեմիդ եկեղեցիները, հոգեպէս մխիթարելու հաւատացեալ մեր ժողովուրդը և է՛լ աւելի ջերմացնելու եղբայրական սէրն ու փոխադարձ գնահատանքը ադրբէջանցի և հայ բարեկամ ժողովուրդների միջև, Սովետական բազմազգ մեծ Միության խաղաղ ու հզօր ընտանիքում:

Սիրով և յարգանքով ընդունեցէք ձեր թեմի նոր առաջնորդ տ. Վահան եպիսկոպոսին և ամէն կերպ նեցուկ կանգնեցէք նրան, որպէսզի առաւել արդիւնաւէտութեամբ նա ի կատար ածի իր հոգևոր առաքելութիւնը:

Թող Աստուած ձեզ լինի միշտ պահապան և օգնական և պահի ձեզ բոլորիդ խաղաղութեան մէջ արևշատ երկար տարիներ:

«Եւ Աստուած իմ, լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն՝ փառօք ի Քրիստոս Յիսուս: Այլ Աստուծոյ և Հօր մերում փառք յաւիտեանս ամէն» (Փիլիպ. Դ 19):

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 16-ը հոկտեմբերի
1973 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԲ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 757